14 հուլիսի 2016 թվականի N 741 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի N 131-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 131-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

1) ուժը կորցրած ճանաչել որոշման N 2 հավելվածի 5-րդ կետի 3-րդ այունակի երրորդ, չորրորդ և հինգերորդ պարբերությունները.

2) որոշման N 2 հավելվածի 7-րդ կետի 3-րդ այունակը «համակարգի լայնածավալ կիրառում» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«			- արտադրության և ծառայությունների ոլորտներում գործունեություն ծավալող շրջանառության հարկ վճարողների գործունեության ռիսկերի գնահատում (պայմանավորված փաստաթղթերի՝ բացառապես էլեկտրոնային եղանակով դուրսգրմամբ), գործարքների փաստաթղթաշրջանառության հսկողության բարելավում - օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում տնտեսավարող սուբյեկտների կողմից առանց դուրս գրված համապատասխան հաշվարկային փաստաթղթերի ապրանքների տեղափոխման և ծառայությունների մատուցման հայտնաբերման ու բացահայտման աշխատանքների իրականացում և փաստաթղթավորման նկատմամբ հսկողության շարունակականության ապահովում - հարկման առումով (շրջանառության հարկով հարկվող) փոխկապակցված անձանց հայտնաբերման նպատակով միջոցառումների իրականացում	»: